

մար կ'ըսուի թէ սրբուհի Վերոնիքայի տունն էր: Երբ մեր Տէրը խաչը ուսը առած կը քալէր զինուորներէ շրջապատուած, չղիմանալով անոր քաշած նեղուլթեան, Վերոնիքա, ըստ աւանդութեան, համարձակեցաւ Տիրոջ մօտենալ և թաշկինակով մը երեսէն վազած քրտինքը սրբել եւ ահա Յիսուսի պատկերը կը դրոշմուի թաշկինակին վրայ (Ո. Ս. Տ. էջ 76):

Իսկ Մարինոս տարբեր աւանդութիւն մը կը յիշէ, (Մար. էջ 143) թէ երբ Քրիստոս խաչի ծանրութեան տակ յոգնած ու քրտնած նեղուլթեան մէջ էր, Վերոնիքա անոր կ'երկարէ իր վարչամակը, որով մեր Տէրը կը սրբէ քրտինքը ու իր դէմքին պատկերը կը սպաւորուի վարչամակին վրայ և Վերոնիքայի տունն ալ հին ժամանակներէ սկսեալ ուխտատեղի կը դառնայ. դարձեալ ան լատին մատենագիրներէ քաղելով կը յաւելու (*նոյն.* էջ 142-143) թէ Վերոնիքայի վարչամակը եռապատիկ էր եւ Յիսուս իր քրտինքը սրբած ժամանակ իր դէմքին պատկերը երեքին վրայ ալ տըպաւորուեցաւ. նոյն պատկերներէն մին Սպանիա տարուած է, երկրորդը Երուսաղէմ կը մնայ, իսկ երրորդը Վերոնիքա իր հետը Հռոմ կը տանի և անով կը բըժըշկէ Տիրեր կայսեր հիւանդութիւնը(\*):

(\*) Վերոնիքայի անուամբ յիշուած Յիսուսի պատկերներու ամենէն հին վկայութիւնը կը գտնուի Mors Pilate կոչուած անվաւեր գործին մէջ, որուն առաջին խմբագրութիւնը կը բարձրանայ Գ. դարու կիսուն (Տես Tischendorf, *Evangelia Apocrypha*, Ա. Տպ. էջ 432):

— Ըստ մէկ քանի բնագրասներու **Վերոնիքա** բառը **ճշմարիտ պատկեր** նշանակութիւնը ունի. յետոյ յասուի անուն եղած է եւ համանուն մը Բերինիկէի՝ Աւեսարանի տեսեսու կնոջ՝ որ ըստ ոմանց Յիսուսի քաւիքնակ երկարոյ կիսն է, եւ ըստ այլոց, Յիսուսի համար պղինձէ արձան մը կանգնել տուող կիսը (R. D. M. 1863. էջ 862):